**Յե-Կվադրատ Ամպեգա**
**Պահպանողական կենսաթոշակային ֆոնդ**

**2024թ. դեկտեմբերի 31-ին**
**ավարտված տարվա**
**ֆինանսական հաշվետվություններ**

## Բովանդակություն


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 3 |
| Զուտ ակտիվների մասին հաշվետվություն | 6 |
| Ֆոնդի արդյունքների մասին հաշվետվություն | 7 |
| Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն | 8 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվություն | 9 |

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Կայք www.kpmg.am

# Անկախ աուդիտորական եզրակացություն

## Ցե-Կվադրատ Ամպեգա Պապանողական կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդի («Ֆոնդ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են զուտ ակիվների մասին հաշվետվությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ ամսաթվին ավարտված տարվա ֆոնդի արդյունքների և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից բացատրական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ֆոնդի զուտ ակտիվների մասին հաշվետվությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա Ֆոնդի արդյունքները և զուտ ակտիվների փոփոխությունները՝ Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն:

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ֆոնդից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (*ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականություններն այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն և մասնակիցների երաշխավորություններով սահմանափակված մասնավոր անգլիական ընկերությանը՝ «KPMG International Limited»-ին անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ընկերությունների համաշխարհային կազմակերպության անդամ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ֆոնդի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ֆոնդը լուծարելու կամ ֆոնդի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ֆոնդի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, որպես մեկ ամբողջություն, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի պատճառով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ֆոնդի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքների հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ֆոնդի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Ֆոնդի կողմից անընդհատության հիմունքի կիրառման դադարեցմանը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հետ, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցվում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների շուրջ:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի համար պատասխանատու գործընկերն է՝

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
25 ապրիլի 2025թ.

# Զուտ ակտիվների մասին հաշվետվություն
# 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| ՀՀ դրամով | 31 դեկտեմբերի 2024թ. | 31 դեկտեմբերի 2023թ. |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| **Պարտատոմսեր ՀՀ դրամով** | | |
| ՀՀ պետական պարտատոմսեր | 193,053,852,553.76 | 153,738,462,552.67 |
| ՀՀ ոչ պետական պարտատոմսեր | 27,653,716,173.20 | 19,572,053,762.08 |
| **Պարտատոմսեր արտարժույթով** | | |
| ՀՀ պետական պարտատոմսեր ԱՄՆ դոլարով | 4,651,594,074.78 | 4,705,617,566.81 |
| ՀՀ ոչ պետական պարտատոմսեր ԱՄՆ դոլարով | 2,812,265,895.64 | 335,062,817.59 |
| **Բաժնետոմսեր ՀՀ դրամով** | | |
| Ներդրումներ բաժնային գործիքներում ՀՀ դրամով | 204,750,000.00 | - |
| **Ֆոնդի փայեր (UCITS) արտարժույթով** | | |
| Փոնդի փայեր եվրոյով | 22,854,031,473.64 | 20,549,893,497.83 |
| Փոնդի փայեր ԱՄՆ դոլարով | 138,149,994,898.62 | 96,598,596,564.55 |
| **Այլընտնտրանքային ներդրումային ֆոնդեր արտարժույթով** | | |
| Այլընտնտրանքային ներդրումային ֆոնդերում բաժնեմասնակցություն ԱՄՆ դոլարով | 1,235,726,964.90 | 662,363,580.47 |
| **Ընդամենը ներդրումներ** | **390,615,932,034.54** | **296,162,050,342.00** |
| **Դրամական միջոցներ** | | |
| Դրամական միջոցները ճանապարհին | 6,360,146,089.00 | 13,652,204,779.00 |
| ՀՀ դրամ | 1,127,045,527.24 | 142,184,514.93 |
| Եվրո | 139,558,724.76 | 1,682,433.33 |
| ԱՄՆ դոլար | 100,471,505.71 | 3,621,086,780.70 |
| **Ավանդներ ՀՀ բանկերում** | | |
| Ավանդներ ՀՀ դրամով | 100,451,000,000.00 | 58,950,000,000.00 |
| **Հաշվեգրված տոկոսներ** | | |
| Հաշվեգրված տոկոսներ | 2,781,345,748.48 | 1,825,382,130.99 |
| **Դեբիտորական պարտքեր** | | |
| Դեբիտորական պարտքեր | - | 2,577,500,324.99 |
| **Ընդամենը ակտիվներ** | **501,575,499,629.73** | **376,932,091,305.94** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| Հաշվեգրումներ վճարների գծով | (422,906,542.33) | (370,019,857.56) |
| **Ընդամենը պարտավորություններ** | **(422,906,542.33)** | **(370,019,857.56)** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ** | **501,152,593,087.40** | **376,562,071,448.38** |

Հաստատվել է հրապարակման համար 2025թ. ապրիլի 25-ին:

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ

| | |
|---|---|
| Արման Վարդանյան | Իզաբելա Ադիլխանյան |
| Գլխավոր գործադիր տնօրեն | Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն |



Զուտ ակտիվների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող բացատրական տեղեկատվության հետ մեկտեղ:

# Ֆոնդի արդյունքների մասին հաշվետվություն
# 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| ՀՀ դրամով | 2024թ. | 2023թ. |
|---|---|---|
| **ՖՈՆԴԻ ԻՐԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ** | | |
| **Ֆոնդի սովորական արդյունք** | | |
| **Եկամուտ (առանց փակման գնի)** | | |
| Եկամուտ այլ ֆոնդերում ներդրումներից | 1,995,023,720.54 | 1,232,571,074.82 |
| Այլ եկամուտ | 206,456.78 | - |
| Մարման վճար | 2,580,591.70 | 2,056,074.74 |
| Տոկոսային եկամուտ | 28,917,335,708.65 | 21,998,548,956.29 |
| | **30,915,146,477.67** | **23,233,176,105.85** |
| **Ծախսեր** | | |
| Կառավարման վճար | (4,175,324,562.54) | (3,478,972,692.18) |
| Երաշխիքային և այլ վճարներ | (96,654,163.14) | (71,822,450.19) |
| Արտաքին աուդիտի գծով ծախսեր | (16,745,001.42) | (16,745,000.00) |
| | **(4,288,723,727.10)** | **(3,567,540,142.37)** |
| **Ֆոնդի սովորական արդյունք** | **26,626,422,750.57** | **19,665,635,963.48** |
| **Իրացված փակման գին** | | |
| Շահույթ դիվիդենտներից | 1,347,693,199.52 | 140,204,000.95 |
| Իրացված շահույթ | 6,832,496,708.35 | 929,545,483.53 |
| Իրացված վնաս | (8,008,582,022.49) | (917,804,170.61) |
| **Իրացված փակման գին** | **171,607,885.38** | **151,945,313.87** |
| **Ֆոնդի իրացված արդյունք** | **26,798,030,635.95** | **19,817,581,277.35** |
| **ՖՈՆԴԻ ՉԻՐԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔ** | | |
| **Չիրացված փակման գնի փոփոխություն** | **19,421,270,067.17** | **28,104,334,814.53** |
| **ՖՈՆԴԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐԴՅՈՒՆՔ** | **46,219,300,703.12** | **47,921,916,091.88** |



Ֆոնդի արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող բացատրական տեղեկատվության հետ մեկտեղ:

# Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| | | |
|---|---|---|
| **ՀՀ դրամով** | | |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (149,594,351 փայ՝ մեկ փային բաժին ընկնող 1,767.6637 ՀՀ դրամ արժեքով)** | | **264,432,497,303.29** |
| **Փայերի փոփոխություն** | | |
| Բաժանորդագրում (33,614,290 փայ) | 64,406,623,316.35 | |
| Մարում (105,778 փայ) | (198,965,263.14) | |
| | | **64,207,658,053.21** |
| **Ֆոնդի արդյունքը տարվա համար** | | **47,921,916,091.88** |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (183,102,862 փայ՝ մեկ փային բաժին ընկնող 2,056.5603 ՀՀ դրամ արժեքով)** | | **376,562,071,448.38** |
| **Փայերի փոփոխություն** | | |
| Բաժանորդագրում (36,444,666 փայ) | 79,766,428,634.20 | |
| Մարում (642,765 փայ) | (1,395,207,698.30) | |
| | | **78,371,220,935.90** |
| **Ֆոնդի արդյունքը տարվա համար** | | **46,219,300,703.12** |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (218,904,763 փայ՝ մեկ փային բաժին ընկնող 2,289.3636 ՀՀ դրամ արժեքով)** | | **501,152,593,087.40** |



Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող բացատրական տեղեկատվության հետ մեկտեղ:

# 1. Ֆոնդ

Ցե-Կվադրատ Ամպեգա Պահպանողական կենսաթոշակային ֆոնդը («Ֆոնդ») հիմնադրվել է 2014թ. հունվարի 1-ին և սկսել է գործունեությունը 2014թ. մարտի 11-ին: Ֆոնդի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Հանրապետության 37: Ֆոնդի կառավարիչն է «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որն ավստրիական «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերության (C-QUADRAT Investment AG) (Վիեննա, Ավստրիա) (74.9%) և գերմանական «Ամպեգա Ասեթ Մենեջմենթ» (Ampega Asset Management GmbH) (Քյոլն, Գերմանիա) (25.1%)՝ «Տալանքս ԱԳ Գրուփ» (Talanx AG Group) անդամ ընկերության համատեղ ձեռնարկությունն է: 1991թ-ին հիմնադրված «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերությունը (C-QUADRAT Investment AG) ակտիվների կառավարիչ է, որը մասնագիտացած է բացարձակ և ընդհանուր եկամտաբերության քանակական և հայեցողական ռազմավարություններում: «Ամպեգա Ասեթ Մենեջմենթ» (Ampega Asset Management) ընկերությունը՝ «Ամպեգա Ինվեսթմենթ» (Ampega Investment) և «Տալանքս Իմմոբիլեն Մենեջմենթ» (Talanx Immobilien Management) ընկերությունների հետ համատեղ, ձևավորում է Գերմանիայի մեծությամբ երրորդ ապահովագրական խմբի՝ «Տալանքս» (Talanx AG) ֆինանսական ծառայությունների գծով սեգմենտը:

Ֆոնդը հանդիսանում է կենսաթոշակային ֆոնդ, որը կառավարվում է մասնագիտացված անկախ ակտիվների կառավարիչների կողմից, ովքեր կառավարում են մասնակիցների միջոցները մինչև մասնակիցների կենսաթոշակային տարիքը լրանալը: Ֆոնդի ակտիվները հանդիսանում են Ֆոնդի մասնակիցների, այլ ոչ՝ Ֆոնդի կառավարչի սեփականությունը: Ֆոնդն ունի Ֆոնդի ակտիվների կառավարման կանոններ և սահմանափակումներ: Ֆոնդի ակտիվները ներդրվում են Հայաստանի և օտարերկրյա բարձրորակ արժեթղթերում, ընդ որում՝ արտարժույթով ներդրումները չեն գերազանցում Ֆոնդի ընդհանուր ակտիվների 40%-ը: Ֆոնդի նպատակն է ապահովել ֆոնդի ակտիվների արժեքի երկարաժամկետ աճը՝ իր ակտիվների 25% ներդնելով բաժնային գործիքներում, բաժնային ֆոնդերում և համարժեք բաժնային գործիքներում, իսկ մնացածը՝ պարտատոմսերում, պարտատոմսերի ֆոնդերում, դրամական շուկայի գործիքներում, ավանդներում և այլ ակտիվներում: Թիրախային խումբ են հանդիսանում կենսաթոշակային խնայողություն իրականացնողները՝ ռիսկի նկատմամբ միջին հակվածությամբ:

Ֆոնդը թողարկում է միայն մեկ դասի փայեր: Փայերը գրանցվում են կենսաթոշակային ֆոնդի հաշվում, որը կառավարվում է մասնակիցների էլեկտրոնային ռեեստրի միջոցով: Փայերն իրավունք չեն տալիս դրանց տիրապետողներին կայացնել որոշումներ Ֆոնդի կառավարման վերաբերյալ: Ֆոնդի գործունեությունը կարող է դադարեցվել Կառավարչի կամ Պահառուի կողմից՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն և միայն ՀՀ կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») Խորհրդի կողմից նախապես տրված համաձայնության առկայության դեպքում:

**Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| *Ֆոնդի կառավարիչ* | «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն Գրանցման հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Հանրապետության 37<br>ՀՀ կենտրոնական բանկում գրանցման ամսաթիվ՝ 29 նոյեմբերի 2013թ.<br>Կառավարվող այլ ֆոնդեր՝<br>Ցե-Կվադրատ Ամպեգա Կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ<br>Ցե-Կվադրատ Ամպեգա Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ<br>«Ցե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդ<br>Ցե-Կվադրատ Ամպեգա սոցիալական ներդրումային ֆոնդ<br>Բաժնետերերի կազմը՝<br>74,9%՝ «Ցե-Կվադրատ» ներդրումային ընկերություն<br>25,1%՝ «Ամպեգա Ասեթ Մենեջմենթ»<br>Ընկերության ղեկավարությունը՝<br>Արման Վարդանյան (Գլխավոր գործադիր տնօրեն)<br>Իզաբելա Աղիլխանյան (Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն)<br>Ամբողջությամբ վճարված կապիտալ՝ 650,000 հազար ՀՀ դրամ |

| | |
|---|---|
| *Դիտորդ խորհուրդ* | Էռնստ-Լյուդվիգ Դրայս (Խորհրդի նախագահ)<br>Անդրեաս Վիմմեր<br>Յոհաննես Կերխեր<br>Կառլոս Մենդեզ դե Վիգո |
| *Ֆոնդի ակտիվների պահառու և ռեեստրավար* | «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն (մասնակիցների փայերի պահառու և ռեեստրավար), իրավաբանական և գլխամասային գրասենյակի հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վ. Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 5-րդ հարկ |
| *Ֆոնդի բանկ* | «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ, իրավաբանական և գլխամասային գրասենյակի հասցե՝ ՀՀ, Երևան 0015, Պարոնյան 42 |
| *Ֆոնդի աղմինիստրատոր* | «Ռայֆազն Բանկ Ինթերնեյշնլ ԱԳ», հասցե՝ Ավստրիա, ք. Վիեննա, Ամ Ստադպարկ 9 |
| *Աուդիտոր* | «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ |

Պորտֆելի հաշվառման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (ՀՀ դրամ): Ֆինանսական հաշվետվություններում տոկոսային մասնակցությունները և դիրքերը ներկայացված են որպես զուտ ակտիվների արժեքի տոկոս հաշվետու ամսաթվի դրությամբ (%):

Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են Ավստրիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքներին համապատասխան: Հաշվետու ժամանակաշրջանը 2024թ. հունվարի 1-ից 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած տարին է:

**Փայերի թողարկում և մարում.** Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է ՀՀ դրամով և իրենից ներկայացնում է Ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքի և Ֆոնդի ընդհանուր պարտավորությունների տարբերությունը: Զուտ ակտիվների արժեքը և փայերիի մարման ու թողարկման գները հաշվարկվում են օրական կտրվածքով և հրապարակվում են Կառավարչի պաշտոնական կայքում: Ֆոնդի փայերի թողարկումը և մարումն իրականացվում է մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքի մասին հրապարակված ամենավերջին տվյալների հիման վրա, որոնք հասանելի են Կառավարչի կայքում թողարկման կամ մարման հայտի ներկայացման ամսաթվի դրությամբ: Փայերի թողարկման համար վճար կամ միջնորդավճար չի գանձվում: Մարման վճարները վճարում է դիմողը, և այդ վճարները կազմում են 0%-ից 2%՝ կախված մարման գործարքի տեսակից (կանխիկ/անկանխիկ, ժառանգություն և այլն) և սահմանվում են Ֆոնդի կանոններով և ՀՀ կիրառելի օրենսդրությամբ:

**Պահառության, ռեեստրավարման և Ֆոնդի բանկային ծառայությունների վճարներ.** Ֆոնդի բանկի կողմից միջնորդավճարներ չեն գանձվում: Պահառուին և ռեեստրավարին վճարվող տարեկան վճարները կազմում են զուտ ակտիվների արժեքի 0.05%-ը՝ հաշվարկված օրական կտրվածքով: Պահառուի և ռեեստրավարի վճարները վճարում է Ֆոնդի կառավարիչը:

**Ֆոնդի կանոնները.** Ֆոնդի կանոնները, պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները, փայերի թողարկման և մարման վերաբերյալ տեղեկատվությունը, Ֆոնդի ներդրումային նպատակները և ներդրումային քաղաքականությունը, ինչպես նաև այլ տեղեկատվությունը տեղադրված են և հասանելի են Ֆոնդի կառավարչի պաշտոնական կայքում՝ https://www.c-quadrat-ampega.am: Մասնակիցները քվեարկելու իրավունք չունեն: Ֆոնդի փայերը ցուցակված չեն որևէ ֆոնդային բորսայում:

**Ֆինանսական գործիքների գնահատման կանոնները.** արժեթղթերը զուտ ակտիվների մասին հաշվետվությունում ներկայացվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ներկա արժեքով, որն իրենից ներկայացնում է վերջին հասանելի շուկայական արժեքը կամ շուկայի բացակայության դեպքում՝ արտաքին ռեսուրսների կամ ֆինանսական մոդելների միջոցով որոշված արժեքը:

Վերը նշված եղանակով որոշված արժեթղթերի ներկա արժեքի և միջին կշռված արժեքի միջև տարբերությունը ֆոնդի արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես չիրացված փակման գնի փոփոխություն: Արժեթղթերով գործառնությունները գրանցվում են առուվաճառքի ամսաթվով:

Պորտֆելի արժույթից տարբեր արժույթով գնանշված արժեթղթերը գնահատվում են վերը նշված եղանակով և այնուհետև փոխարկվում են պորտֆելի արժույթի՝ գնահատման ամսաթվի դրությամբ գործող ՀՀ ԿԲ-ի փոխարժեքով:

**Ավանդներ.** ավանդները գնահատվում են գծային մեթոդով:

**Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առուվաճառքի ենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր.** զուտ ակտիվների արժեքը հաշվարկելիս՝ կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առուվաճառքի ենթարկվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը գնահատվում են շուկայի փակման վերջին հասանելի գնի հիման վրա:

Պարտատոմսերը և այլ նմանատիպ արժեթղթերը գնահատվում են ֆինանսական ծառայություններ մատուցող տարբեր կազմակերպությունների կողմից ներկայացված փակման գներով: ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերը գնահատվում են օգտագործելով ՀՀ ԿԲ-ի կողմից օրական կտրվածքով հրապարակվող շուկայական դրույքաչափը:

**Կարգավորվող շուկայում կամ համանման հարթակում առուվաճառքի չենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր.** կարգավորվող շուկայում առուվաճառքի չենթարկվող բաժնետոմսերը գնահատվում են Ֆոնդի կառավարչի կողմից՝ օգտագործելով զուտ կապիտալի և շահութաբերության վրա հիմնված մեթոդները՝ հաշվի առնելով վերջին խոշոր գործարքների գները:

**Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ (UCITS)**. UCITS փայերը կամ բաժնետոմսերը գնահատվում են մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների վերջին գնանշված արժեքով:

**Հարկում.** Ֆոնդի գործունեությունը կարգավորող ՀՀ գործող օրենսդրության համաձայն՝ Ֆոնդի շահույթը, եկամուտները կամ կապիտալի հավելաճից օգուտները ենթակա չեն հարկման:

**Կառավարման վճարներ.** կառավարման վճարները հաշվարկվում են ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հիման վրա և ճանաչվում են Ֆոնդի իրացված արդյունքում: Կառավարման վճարներն ամբողջությամբ վճարվում են Ֆոնդի կառավարչին, որը կրում է ֆոնդի բոլոր գործառնական ծախսերը, բացառությամբ աուդիտի համար վճարի և կենսաթոշակային երաշխիքային ֆոնդի վճարի: Կառավարման վճարները չեն ներառում գործարքի հետ կապված ծախսերը: Տարեկան կառավարման վճարը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ 0.95% տարեկան դրույքաչափով (2023թ-ին՝ 1.1%), ներառյալ բոլոր կիրառելի հարկերը, և ենթակա է վճարման մինչև հաջորդ ամսվա 10-րդ աշխատանքային օրը: UCITS-ի կողմից գանձվող կառավարման վճարների առավելագույն մասնաբաժինը կազմում է դրանց զուտ ակտիվների արժեքի 0.07%-1.74% (2023թ-ին՝ 0.07%-2.00%):

**Բաշխումներ մասնակիցներին.** Ֆոնդի եկամուտը չի բաշխվում մասնակիցներին, այլ վերստին ներդրվում է Ֆոնդում: Մասնակիցները կարող են ստանալ Ֆոնդի եկամտի իրենց մասնաբաժինը միայն փայերի մարման դեպքում:

**Վարձատրության քաղաքականությունը.** 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա ընթացքում Կառավարչի կողմից իր աշխատակիցներին վճարված վարձատրության ընդհանուր գումարը կազմում է 504,013 հազար ՀՀ դրամ (2023թ-ին՝ 425,871 հազար ՀՀ դրամ), որից 255,510 հազար ՀՀ դրամը (2023թ-ին՝ 214,801 հազար ՀՀ դրամը) իրենից ներկայացնում է ղեկավարության վարձատրությունը: Ֆոնդն աշխատակիցներ չունի: Ֆոնդը չի կատարում որևէ ուղղակի վճարում վարձատրության գծով: Կառավարչի կողմից իր ղեկավար անձնակազմին և աշխատակիցներին վճարվող վարձատրությունը հաշվարկվում է հաստատագրված վարձատրության քաղաքականության հիման վրա և ուղղակիորեն կախված չէ Ֆոնդի արդյունքներից: Հաշվետու տարում Կառավարչի՝ վարձատրությանն առնչվող քաղաքականությունում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

**Գործարար միջավայրը.** Ֆոնդն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ֆոնդի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որին բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ:

Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Բացի այդ, շարունակական բնույթ կրող ռազմական հակամարտությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև, որի ավարտին Լեռնային Ղարաբաղի տարածքն անցավ Ադրբեջանի վերահսկողության ներքո 2023թ. սեպտեմբերին, և Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև շարունակվող ռազմական հակամարտությունը մեծացրել է անորոշությունը գործարար միջավայրում: Հայաստանի և Ադրբեջանի միջև իրավիճակը շարունակում է լարված մնալ՝ երկրների միջև սահմանի սահմանազատման շուրջ շարունակվող տարաձայնությունների պատճառով:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ֆոնդի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

**Գործառնական ռիսկ.** գործառնական ռիսկը համակարգերի խափանման, մարդկային սխալի, խարդախության դեպքերի կամ արտաքին իրադարձությունների հետևանքով կորուստ կրելու ռիսկն է: Երբ հսկողության համակարգը չի գործում ըստ պատշաճի, գործառնական ռիսկերը կարող են վնասել Ֆոնդի հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգային հետևանքներ կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Ֆոնդը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ձեռնարկում է քայլեր դրանք կառավարելու համար՝ հսկողության համակարգի և հնարավոր ռիսկերի մոնիտորինգի և դրանց հակազդման միջոցով: Հսկողության համակարգը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատումը, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգերը, անձնակազմի վերապատրաստման և գնահատման գործընթացները:

**Ֆոնդի գործունեությունը նախորդ ֆինանսական տարում**

***Ակտիվների տեղաբաշխման 2024թ. մարտավարական որոշումներ***

2024թ. ընթացքում Կառավարիչն ակնկալել և արդյունավետ կերպով արձագանքել է տեղական պարտքային արժեթղթերի նվազող եկամտաբերությանը, համաշխարհային գնաճի նվազմանը և արտասահմանյան ընկերությունների՝ սպասվածից բարձր եկամուտներին: Ակտիվների տեղաբաշխման հիմնական փոփոխությունները եղել էին հետևյալի մասով՝ ՀՀ պետական պարտատոմսերի պորտֆելի կառուցվածքի կենտրոնացում միջին սեգմենտում, մասնաբաժնի նվազեցում տեղական բանկային հատվածում, մասնաբաժնի ավելացում միջազգային ներդրումների ոլորտում, մասնավորապես բաժնային գործիքներում և արտարժույթով ակտիվներում: Տվյալ մարտավարական որոշումը կայացվել է Կառավարչի կողմից շուկայի ուսումնասիրության արդյունքում:

## 2. Ֆոնդի վերաբերյալ ամփոփ տվյալներ վերջին երեք տարիների համար

| Ամսաթիվ | Արժույթ | Ընդամենը զուտ ակտիվների արժեք | Մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեք | Ընդամենը բաշխում | Բաշխում ըստ փայի |
|---|---|---|---|---|---|
| 31 դեկտեմբերի 2024թ. | ՀՀ դրամ | 501,152,593,087.40 | 2,289.3636 | - | - |
| 31 դեկտեմբերի 2023թ. | ՀՀ դրամ | 376,562,071,448.38 | 2,056.5603 | - | - |
| 31 դեկտեմբերի 2022թ. | ՀՀ դրամ | 264,432,497,303.29 | 1,767.6637 | - | - |

# 3. Ֆոնդի ակտիվների և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| | |
|---|---|
| Մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքը ֆինանսական տարվա վերջի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ դրամով | 1,879.3186 |
| Մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքը ֆինանսական տարվա վերջի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ դրամով | 1,925.4968 |
| Մեկ փային բաժին ընկնող զուտ եկամուտը 2021թ. հունվարի 1-ից 2021թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար, ՀՀ դրամով | 46.1782 |
| **Մեկ փայի կատարողականը ֆինանսական տարվա ընթացքում տոկոսային արտահայտությամբ, %** | **2.46%** |
| Մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքը ֆինանսական տարվա վերջի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ դրամով | 1,767.6637 |
| Մեկ փային բաժին ընկնող զուտ նվազումը 2022թ. հունվարի 1-ից 2022թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար, ՀՀ դրամով | (157.8331) |
| **Մեկ փայի կատարողականը ֆինանսական տարվա ընթացքում տոկոսային արտահայտությամբ, %** | **(8.20) %** |
| Մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքը ֆինանսական տարվա վերջի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ դրամով | 2,056.5603 |
| Մեկ փային բաժին ընկնող զուտ եկամուտը 2023թ. հունվարի 1-ից 2023թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար, ՀՀ դրամով | 288.8966 |
| **Մեկ փայի կատարողականը ֆինանսական տարվա ընթացքում տոկոսային արտահայտությամբ, %** | **16.34 %** |
| Մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքը ֆինանսական տարվա վերջի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ դրամով | 2,289.3636 |
| Մեկ փային բաժին ընկնող զուտ եկամուտը 2024թ. հունվարի 1-ից 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի համար, ՀՀ դրամով | 232.8033 |
| **Մեկ փայի կատարողականը ֆինանսական տարվա ընթացքում տոկոսային արտահայտությամբ, %** | **11.32 %** |
| **Մեկ փային բաժին ընկնող զուտ եկամուտը՝ սկսած գործունեությունը սկսելու ամսաթվից, ՀՀ դրամով** | **1,289.3636** |
| **Մեկ փայի կատարողականը՝ սկսած գործունեությունը սկսելու ամսաթվից, տոկոսային արտահայտությամբ, %** | **128.94%** |

# 4. Զուտ ակտիվների արժեքի կազմը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| ISIN | Անվանումը* | Արժույթը | Քանակը | Ձեռք բերված քանակը | Վաճառված քանակը | Շուկայական արժեքը արժույթով (կլորացված) | Շուկայական արժեքը ՀՀ դրամով | % զուտ ակտիվների արժեքի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետություն** | | | | | | | | |
| **Կարգավորվող շուկայում առուվաճառքի ենթարկվող ՀՀ պետական պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMGB1029A276 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/27 | ՀՀ դրամ | 3,980,000,000 | - | - | 102.90 | 4,095,334,724.52 | 0.82% |
| AMGB1029A292 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 19/29 | ՀՀ դրամ | 16,657,800,000 | - | - | 98.79 | 16,456,702,957.24 | 3.28% |
| AMGB20072287 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 08/28 | ՀՀ դրամ | 250,000,000 | - | - | 108.11 | 270,283,767.75 | 0.05% |
| AMGB20172327 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 12/32 | ՀՀ դրամ | 7,403,148,000 | - | - | 120.98 | 8,956,373,913.13 | 1.79% |
| AMGB2029A366 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 16/36 | ՀՀ դրամ | 9,684,000,000 | - | - | 123.91 | 11,999,732,179.43 | 2.39% |
| AMGB30163472 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/47 | ՀՀ դրամ | 5,540,000,000 | - | - | 131.48 | 7,284,182,481.82 | 1.45% |
| AMGB2029A374 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/37 | ՀՀ դրամ | 13,400,000,000 | 7,620,000,000 | - | 121.13 | 16,230,976,808.40 | 3.24% |
| AMGB3129A504 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/50 | ՀՀ դրամ | 9,727,400,000 | - | 6,822,600,000 | 100.21 | 9,748,201,354.25 | 1.95% |
| AMGN60294250 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/25 | ՀՀ դրամ | 1,050,000,000 | - | 4,250,000,000 | 100.78 | 1,058,217,623.40 | 0.21% |
| AMGB1129A316 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/31 | ՀՀ դրամ | 43,052,200,000 | 16,700,000,000 | - | 92.64 | 39,882,833,167.06 | 7.96% |
| AMGN60294268 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/26 | ՀՀ դրամ | 850,000,000 | - | 2,900,000,000 | 98.77 | 839,531,195.15 | 0.17% |
| AMGN36294251 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 22/25 | ՀՀ դրամ | 4,514,751,000 | - | 7,225,249,000 | 101.88 | 4,599,542,276.68 | 0.92% |
| AMGN60294276 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 22/27 | ՀՀ դրամ | 6,105,300,000 | - | 1,274,700,000 | 101.65 | 6,205,912,102.09 | 1.24% |
| AMGB1029A250 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 15/25 | ՀՀ դրամ | 2,400,000 | - | 3,755,600,000 | 103.69 | 2,488,511.22 | 0.00% |
| AMGB1129A332 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 22/33 | ՀՀ դրամ | 51,642,000,000 | 28,745,000,000 | - | 100.35 | 51,823,150,788.80 | 10.34% |
| AMGB3029A522 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 22/52 | ՀՀ դրամ | 4,700,000,000 | 500,000,000 | - | 100.13 | 4,706,027,693.60 | 0.94% |
| AMGN60294284 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 23/28 | ՀՀ դրամ | 1,880,000,000 | - | - | 100.61 | 1,891,519,322.12 | 0.38% |
| AMGN60294292 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 24/29 | ՀՀ դրամ | 3,200,000,000 | 3,200,000,000 | - | 97.66 | 3,125,080,419.20 | 0.62% |
| AMGN36294277 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 24/27 | ՀՀ դրամ | 3,900,000,000 | 3,900,000,000 | - | 99.43 | 3,877,761,267.90 | 0.77% |
| **Կարգավորվող շուկայում առուվաճառքի ենթարկվող ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMNMCCB2NER0 | «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՓԲԸ 22/25 | ՀՀ դրամ | 200,000 | - | - | 10,263.34 | 2,052,668,180.00 | 0.41% |
| AMSWISB2AER6 | «Արմսվիսբանկ» ՓԲԸ 19/25 | ԱՄՆ դոլար | 8,000 | - | - | 101.60 | 322,334,595.81 | 0.06% |
| AMNMCCB2MER2 | «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՓԲԸ 22/25 | ՀՀ դրամ | 180,000 | - | - | 10,226.20 | 1,840,716,216.00 | 0.37% |
| AMFNCAB2EER0 | «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ 23/25 | ՀՀ դրամ | 5,000 | - | - | 51,409.14 | 257,045,708.50 | 0.05% |
| AMHELCB21ER6 | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ 23/26 | ՀՀ դրամ | 80,000 | - | - | 102,952.75 | 8,236,220,264.00 | 1.64% |
| AMNMCCB2OER8 | «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՓԲԸ 23/26 | ՀՀ դրամ | 150,000 | - | - | 10,548.57 | 1,582,285,875.00 | 0.32% |
| AMNMCCB2PER5 | «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՓԲԸ 23/26 | ՀՀ դրամ | 200,000 | - | - | 10,254.10 | 2,050,820,960.00 | 0.41% |
| AMSWISB2HER1 | «Արմսվիսբանկ» ՓԲԸ 23/27 | ՀՀ դրամ | 30,300 | 1,200 | - | 52,705.36 | 1,596,972,504.96 | 0.32% |
| AMAMRBBMUER8 | «Ամերիաբանկ» ՓԲԸ 24/26 | ՀՀ դրամ | 3,000 | 3,000 | - | 101,725.93 | 305,177,778.00 | 0.06% |
| AMAMRBBMOER1 | «Ամերիաբանկ» ՓԲԸ 23/25 | ՀՀ դրամ | 750 | 750 | - | 100,307.21 | 75,230,408.33 | 0.02% |
| AMNMCCB2QER3 | «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՓԲԸ 24/27 | ՀՀ դրամ | 200,000 | 200,000 | - | 10,314.30 | 2,062,859,180.00 | 0.41% |
| AMCOVSB2IER0 | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ պարտատոմս 24/26 | ՀՀ դրամ | 3,950 | 3,950 | - | 51,366.32 | 202,896,966.37 | 0.04% |
| AMFARMB21ER4 | «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ 24/26 | ՀՀ դրամ | 2,000 | 2,000 | - | 105,835.71 | 211,671,420.00 | 0.04% |
| AMSWISB2MER1 | «Արմսվիսբանկ» ՓԲԸ 24/28 | ՀՀ դրամ | 40,000 | 40,000 | - | 50,503.72 | 2,020,148,792.00 | 0.40% |
| AMFMGCB25ER4 | «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ 24/27 | ՀՀ դրամ | 800 | 800 | - | 103,968.03 | 83,174,426.64 | 0.02% |
| AMFNCAB2GER5 | «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ 24/26 | ՀՀ դրամ | 6,000 | 6,000 | - | 51,628.76 | 309,772,549.80 | 0.06% |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| AMAMRBBN8ER7 | AMERIABANK 24/27 | ՀՀ դրամ | 15,000 | 15,000 | - | 102,555.17 | 1,538,327,500.50 | 0.31% |
| AMHELCB23ER2 | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ 24/29 | ՀՀ դրամ | 30,000 | 30,000 | - | 101.70 | 1,209,946,793.66 | 0.24% |
| AMSWISB2LER3 | «Արմսվիսբանկ» ՓԲԸ 24/27 | ՀՀ դրամ | 30,000 | 30,000 | - | 51,904.52 | 1,557,135,717.00 | 0.31% |
| AMACBAB2GER4 | ACBA BANK 24/29 | ՀՀ դրամ | 2,558 | 2,558 | - | 106,212.68 | 271,692,047.46 | 0.05% |
| AMHELCB25ER7 | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ 24/30 | ՀՀ դրամ | 12,500 | 12,500 | - | 101,247.25 | 1,265,590,569.72 | 0.25% |
| AMHELCB24ER0 | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ 24/30 | ԱՄՆ դոլար | 32,000 | 32,000 | - | 100.87 | 1,279,984,506.17 | 0.26% |
| AMFNCAB2HER3 | «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ 24/27 | ՀՀ դրամ | 2,600 | 2,600 | - | 51,272.73 | 133,309,108.92 | 0.03% |
| **Կարգավորվող շուկայում առուվաճառքի ենթարկվող ՀՀ եվրապարտատոմսեր** | | | | | | | | |
| XS2010043904 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 19/29 REGS | ԱՄՆ դոլար | 9,650,000 | - | - | 87.47 | 3,347,228,922.76 | 0.67% |
| XS2010028939 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/31REGS | ԱՄՆ դոլար | 4,000,000 | - | - | 82.23 | 1,304,365,152.02 | 0.26% |
| **Ընդամենը Հայաստանի Հանրապետության պարտատոմսեր** | | | | | | | **228,171,428,697.38** | **45.53%** |
| | | | | | | | | |
| **Օտարերկրա ներդրումներ** | | | | | | | | |
| **Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | | |
| **Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ պարտատոմսային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ** | | | | | | | | |
| IE00BKKKWJ26 | ISH2-DL C.BD U. DL ACC. | ԱՄՆ դոլար | 8,320,000 | 3,650,000 | - | 4.92 | 16,216,778,706.12 | 3.24% |
| LU1215461085 | UBSLFS-BBMSCIUSLCS ADDL | ԱՄՆ դոլար | 1,385,000 | - | 480,000 | 14.97 | 8,219,310,754.10 | 1.64% |
| IE00B1FZS798 | ISHSII-DLT.BD7-10YR DLDIS | ԱՄՆ դոլար | 47,498 | - | - | 168.53 | 3,174,398,533.53 | 0.63% |
| IE00BSKRJZ44 | ISHSIV-DL T.BD20+YR DL D | ԱՄՆ դոլար | 3,300,000 | 800,000 | - | 3.25 | 4,255,723,296.05 | 0.85% |
| IE00BYZTVT56 | ISHSII-EOCO.BD ESG UE EOD | Եվրո | 4,300,000 | 4,300,000 | - | 4.75 | 8,462,067,966.90 | 1.69% |
| **Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ բաժնային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ** | | | | | | | | |
| IE00BF4G6Y48 | JPM-GLOBAL REI EQ A | ԱՄՆ դոլար | 775,000 | 775,000 | - | 50.68 | 15,574,150,450.20 | 3.11% |
| LU0096363154 | CTL GLOB.FOCUS IU | ԱՄՆ դոլար | 1,410,000 | 1,410,000 | - | 27.24 | 15,228,998,505.79 | 3.04% |
| IE00BJQRDN15 | INVESCOM2-IQSESG GLOE USD | ԱՄՆ դոլար | 490,001 | 490,001 | - | 77.71 | 15,100,202,840.87 | 3.01% |
| IE00BFNM3J75 | ISHSIV-MSCI WLD ESG S.DLA | ԱՄՆ դոլար | 6,100,000 | 6,100,000 | - | 10.23 | 24,736,857,616.31 | 4.94% |
| LU0878583243 | JPM-EM.MK.DV.JPMEMD CADL | ԱՄՆ դոլար | 110,000 | 110,000 | - | 156.17 | 6,812,385,272.09 | 1.36% |
| LU0129437173 | JPM-GL.SUS.EQ.JPMGSRC | ԱՄՆ դոլար | 106,000 | 106,000 | - | 328.49 | 13,808,195,406.57 | 2.76% |
| LU0106255481 | SISF QEP GL CORE C ACC | ԱՄՆ դոլար | 600,000 | 600,000 | - | 63.14 | 15,022,993,516.99 | 3.00% |
| **Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | **146,612,062,865.52** | **29.27%** |
| **Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում չթույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | | |
| **Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ համակցված (բաժնային և պարտատոմսային գործիքներում) ներդրումների ուղղվածությամբ** | | | | | | | | |
| AT0000A12G92 | I-AM GR.ST.OPP. (VTA) | Եվրո | 1,577,697 | - | - | 22.04 | 14,391,963,506.74 | 2.87% |
| **Այլընտրանքային ներդրումային ֆոնդեր արտարժույթով** | | | | | | | | |
| AMFMVCH01ER1 | Formula VC Private Equity Fund** | ԱՄՆ դոլար | 7 | 7 | - | 55,730.08 | 154,702,243.68 | 0.03% |
| | Amber Capital Private Equity Fund** | ԱՄՆ դոլար | 2,744,717 | 991,433.37 | | 0.99 | 1,081,024,721.22 | 0.22% |
| **Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում չթույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | **15,627,690,471.64** | **3.12%** |
| **Ընդամենը գործառնություններ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | **162,239,753,337.16** | **32.39%** |
| **Ներդրումներ բաժնային գործիքներում (բաժնետոմսերում), ՀՀ դրամով** | | | | | | | | |
| AMTLCLS10ER3 | «Թել-Սել» ՓԲԸ | ՀՀ դրամ | 500,000 | 500,000 | | 409.50 | 204,750,000.00 | 0.04% |
| **Ընդամենը ներդրումներ բաժնային գործիքներում** | | | | | | | **204,750,000.00** | **0.04%** |

| | | | |
|---|---|---|---|
| **Դրամական միջոցներ** | | **1,367,075,757.71** | **0.27%** |
| **Դրամական միջոցները ճանապարհին** | | **6,360,146,089.00** | **1.27%** |
| **Ավանդներ ՀՀ բանկերում** | | **100,451,000,000.00** | **20.04%** |
| **Հաշվեգրումներ և հետաձգումներ** | | | |
| Հաշվեգրված տոկոսներ | | 2,781,345,748.48 | 0.55% |
| Հաշվեգրումներ վճարների գծով | | (422,906,542.33) | (0.08)% |
| **Ընդամենը հաշվեգրումներ և հետաձգումներ** | | **2,358,439,206.15** | |
| **Ընդամենը զուտ ակտիվների արժեքը** | | **501,152,593,087.40** | **100%** |
| **Մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքը** | **ՀՀ դրամ** | **2,289.3636** | |
| **Զմարված փայեր** | **Հատ** | **218,904,761.60** | |

* Արժեթղթի անվանումից հետո առաջին թիվը թողարկման տարին է, իսկ երկրորդ թիվը՝ մարման տարին է:
** 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս բաժնային գործիքներում ընդհանուր ներդրումները կազմում են 5,700,000 ԱՄՆ դոլար:

## Զուտ ակտիվների արժեքի կազմը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| ISIN | Անվանումը* | Արժույթը | Քանակը | Ձեռք բերված քանակը | Վաճառված քանակը | Շուկայական արժեքը արժույթով (կլորացված) | Շուկայական արժեքը ՀՀ դրամով | % զուտ ակտիվների արժեքի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետություն** | | | | | | | | |
| **Կարգավորվող շուկայում առուվաճառքի ենթարկվող ՀՀ պետական պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMGB1029A276 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/27 | ՀՀ դրամ | 3,980,000,000 | - | - | 99.35 | 3,954,028,884.12 | 1.05% |
| AMGB1029A292 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 19/29 | ՀՀ դրամ | 16,657,800,000 | - | 1,607,200,000 | 93.99 | 15,655,919,883.93 | 4.16% |
| AMGB20072287 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 08/28 | ՀՀ դրամ | 250,000,000 | - | - | 105.09 | 262,727,194.00 | 0.07% |
| AMGB20172327 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 12/32 | ՀՀ դրամ | 7,403,148,000 | - | - | 116.61 | 8,632,831,818.90 | 2.29% |
| AMGB2029A366 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 16/36 | ՀՀ դրամ | 9,684,000,000 | 2,384,000,000 | - | 117.44 | 11,373,370,284.71 | 3.02% |
| AMGB30163472 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 17/47 | ՀՀ դրամ | 5,540,000,000 | 200,000,000 | - | 122.51 | 6,787,036,848.16 | 1.80% |
| AMGB2029A374 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/37 | ՀՀ դրամ | 5,780,000,000 | 1,800,000,000 | - | 114.34 | 6,608,955,051.62 | 1.76% |
| AMGB3129A504 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/50 | ՀՀ դրամ | 16,550,000,000 | 10,200,000,000 | - | 92.63 | 15,330,633,651.25 | 4.07% |
| AMGN60294250 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 20/25 | ՀՀ դրամ | 5,300,000,000 | - | 900,000,000 | 96.78 | 5,129,171,168.50 | 1.36% |
| AMGB1129A316 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/31 | ՀՀ դրամ | 26,352,200,000 | 6,372,200,000 | - | 86.92 | 22,905,693,001.62 | 6.08% |
| AMGN60294268 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/26 | ՀՀ դրամ | 3,750,000,000 | - | - | 93.69 | 3,513,513,063.75 | 0.93% |
| AMGN36294251 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 22/25 | ՀՀ դրամ | 11,740,000,000 | 5,000,000,000 | - | 99.88 | 11,725,467,746.66 | 3.11% |
| AMGN60294276 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 22/27 | ՀՀ դրամ | 7,380,000,000 | 2,820,000,000 | - | 97.89 | 7,224,443,075.88 | 1.92% |
| AMGB1029A250 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 15/25 | ՀՀ դրամ | 3,758,000,000 | - | - | 102.35 | 3,846,500,715.86 | 1.02% |
| AMGB1129A332 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 22/33 | ՀՀ դրամ | 22,897,000,000 | 22,897,000,000 | - | 94.59 | 21,657,919,342.75 | 5.75% |
| AMGB3029A522 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 22/52 | ՀՀ դրամ | 4,200,000,000 | 4,200,000,000 | - | 92.52 | 3,885,643,792.80 | 1.03% |
| AMGN36294269 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 23/26 | ՀՀ դրամ | 3,500,000,000 | 3,500,000,000 | - | 98.06 | 3,431,998,059.00 | 0.91% |
| AMGN60294284 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 23/28 | ՀՀ դրամ | 1,880,000,000 | 1,880,000,000 | - | 96.42 | 1,812,608,969.16 | 0.48% |
| **Կարգավորվող շուկայում առուվաճառքի ենթարկվող ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր** | | | | | | | | |
| AMNMCCB2NER0 | «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՓԲԸ 22/25 | ՀՀ դրամ | 200,000 | - | - | 10,372.77 | 2,074,554,960.00 | 0.55% |
| AMSWISB2AER6 | «Արմսվիսբանկ» ՓԲԸ 19/25 | ԱՄՆ դոլար | 8,000 | - | - | 103.47 | 335,062,817.59 | 0.10% |
| AMNMCCB2LER4 | «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՓԲԸ 21/24 | ՀՀ դրամ | 100,000 | - | - | 10,289.84 | 1,028,983,910.00 | 0.27% |
| AMCOVSB2CER3 | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ պարտատոմս 21/24 | ՀՀ դրամ | 24,000 | - | - | 50,956.23 | 1,222,949,450.40 | 0.32% |
| AMNMCCB2MER2 | «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՓԲԸ 22/25 | ՀՀ դրամ | 180,000 | - | - | 10,252.71 | 1,845,487,440.00 | 0.49% |
| AMFNCAB2EER0 | «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ 23/25 | ՀՀ դրամ | 5,000 | 5,000 | - | 52,598.13 | 262,990,660.50 | 0.07% |
| AMHELCB21ER6 | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ 23/26 | ՀՀ դրամ | 80,000 | 80,000 | - | 100,607.68 | 8,048,614,618.92 | 2.14% |
| AMNMCCB2OER8 | «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՓԲԸ 23/26 | ՀՀ դրամ | 150,000 | 150,000 | - | 10,635.43 | 1,595,314,245.00 | 0.42% |
| AMNMCCB2PER5 | «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՓԲԸ 23/26 | ՀՀ դրամ | 200,000 | 200,000 | - | 9,954.94 | 1,990,988,000.00 | 0.53% |
| AMSWISB2HER1 | «Արմսվիսբանկ» ՓԲԸ 23/27 | ՀՀ դրամ | 29,100 | 29,100 | - | 51,620.98 | 1,502,170,477.26 | 0.40% |
| **Կարգավորվող շուկայում առուվաճառքի ենթարկվող ՀՀ եվրապարտատոմսեր** | | | | | | | | |
| XS2010043904 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 19/29 REGS | ԱՄՆ դոլար | 9,650,000 | 6,350,000 | - | 86.76 | 3,389,078,570.82 | 0.91% |
| XS2010028939 | ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍ 21/31 REGS | ԱՄՆ դոլար | 4,000,000 | 3,000,000 | - | 81.31 | 1,316,538,995.99 | 0.35% |
| **Ընդամենը Հայաստանի Հանրապետության պարտատոմսեր** | | | | | | | **178,351,196,699.15** | **47.36%** |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Օտարերկրա ներդրումներ** | | | | | | | | |
| **Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | | |
| **Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ պարտատոմսային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ** | | | | | | | | |
| LU1215461085 | UBSLFS-BBMSCIUSLCS ADDL | ԱՄՆ դոլար | 1,865,000 | 926,500 | - | 15.41 | 11,629,748,256.68 | 3.09% |
| IE00B1FZS798 | ISHSII-DLT.BD7-10YR DLDIS | ԱՄՆ դոլար | 47,498 | 47,498 | - | 176.31 | 3,389,862,195.68 | 0.90% |
| IE00BSKRJZ44 | ISHSIV-DL T.BD20+YR DL D | ԱՄՆ դոլար | 2,500,000 | 2,500,000 | - | 3.66 | 3,704,334,487.48 | 0.98% |
| IE00BKKKWJ26 | ISH2-DL C.BD U. DL ACC. | ԱՄՆ դոլար | 4,670,000 | - | - | 4.80 | 9,068,479,605.91 | 2.41% |
| **Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ բաժնային գործիքներում ներդրումների ուղղվածությամբ** | | | | | | | | |
| IE00BDZZTM54 | ISHSIV-MSCI WLD.SRI U.DLD | ԱՄՆ դոլար | 2,080,000 | - | 1,750,000 | 8.52 | 7,174,578,917.96 | 1.91% |
| IE00B52VJ196 | ISHSII-MSCI EUR.SRI EOACC | Եվրո | 257,000 | 70,000 | - | 64.34 | 7,406,196,702.00 | 1.97% |
| IE00BYVJRR92 | ISIV-MSCIUSASRI U.ETF DLA | ԱՄՆ դոլար | 2,704,000 | - | - | 14.22 | 15,559,058,954.31 | 4.13% |
| IE00BYVJRP78 | ISHSIV-SUS.M.EM.MK.SRI DL | ԱՄՆ դոլար | 2,075,000 | 1,700,000 | - | 6.93 | 5,820,779,002.47 | 1.55% |
| IE00BYX8XC17 | ISHSIV-MSCI JAPAN SRI DL | ԱՄՆ դոլար | 1,130,000 | - | - | 6.76 | 3,093,939,502.78 | 0.82% |
| LU0629460089 | UBSLFS-MSCI USA SR ADDL | ԱՄՆ դոլար | 181,250 | 40,000 | - | 200.05 | 14,677,305,909.29 | 3.90% |
| LU0950674332 | UBSLFS-MSCI WLD.SR AADL | ԱՄՆ դոլար | 1,250,008 | 210,008 | - | 28.50 | 14,420,736,042.04 | 3.83% |
| LU0501950314 | JPM-GLOBAL FOCUS C A.DL | ԱՄՆ դոլար | 60,000 | 60,000 | - | 331.85 | 8,059,773,689.95 | 2.14% |
| **Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում թույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | **104,004,793,266.55** | **27.63%** |
| **Գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում չթույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | | |
| **Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումներ (UCITS)՝ համակցված (բաժնային և պարտատոմսային գործիքներում) ներդրումների ուղղվածությամբ** | | | | | | | | |
| AT0000A12G92 | I-AM GR.ST.OPP. (VTA) | Եվրո | 1,577,697 | 375,000 | - | 18.60 | 13,143,696,795.83 | 3.48% |
| **Ներդրումներ բաժնային գործիքներում** | | | | | | | | |
| | Amber Capital Private Equity Fund** | ԱՄՆ դոլար | 1,753,284 | 846,733 | - | 0.93 | 662,363,580.47 | 0.18% |
| **Ընդամենը գործառնություններ պաշտոնական արժեթղթերի բորսայում չթույլատրված՝ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | **13,806,060,376.3** | **3.66%** |
| **Ընդամենը գործառնություններ փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներով (UCITS)** | | | | | | | **117,810,853,642.85** | **31.29%** |
| | | | | | | | | |
| **Դրամական միջոցներ** | | | | | | | **3,764,953,728.96** | **1.00%** |
| **Դրամական միջոցները ճանապարհին** | | | | | | | **13,652,204,779.00** | **3.63%** |
| **Ավանդներ ՀՀ բանկերում** | | | | | | | **58,950,000,000.00** | **15.65%** |
| **Դեբիտորական պարտքեր** | | | | | | | **2,577,500,324.99** | **0.68%** |
| **Հաշվեգրումներ և հետաձգումներ** | | | | | | | | |
| Հաշվեգրված տոկոսներ | | | | | | | 1,825,382,130.99 | 0.48% |
| Հաշվեգրումներ վճարների գծով | | | | | | | (370,019,857.56) | -0.10% |
| **Ընդամենը հաշվեգրումներ և հետաձգումներ** | | | | | | | **1,455,362,273.43** | **0.38%** |
| **Ընդամենը զուտ ակտիվների արժեքը** | | | | | | | **376,562,071,448.38** | **100%** |
| **Մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքը** | | | | | | **ՀՀ դրամ** | **2,056.5603** | |
| **Զմարված փայեր** | | | | | | **Հատ** | **183,102,862** | |

* Արժեթղթի անվանումից հետո առաջին թիվը թողարկման տարին է, իսկ երկրորդ թիվը՝ մարման տարին է:
** 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս բաժնային գործիքում ընդհանուր ներդրումները կազմում են 4,700,000 ԱՄՆ դոլար: